**Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Գեղիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի** (11 **դասաժամ**), **հայոց լեզվի և գրականության** (6 **դասաժամ**), **ինֆորմատիկայի** (8 **դասաժամ**), **երաժշտության** (7 **դասաժամ**), **կերպարվեստի** (7 **դասաժամ**), **աշխարհագրության** (8 **դասաժամ**), **տեխնոլոգիայի** (6 **դասաժամ**) **ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 **թ. սեպտեմբերի** 17-**ին՝ ժամը** 14:00-**ին**, ՀՀ Սյունիքի մարզի Գեղիի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գյուղ Գեղի, փ.1, շ. 9: Տեղեկությունների համար զանգահարել 098 33-00-23 հեռախոսահամարով: